ջուր դնելով ձմեռուան համար կը պահէ, պահք աւուր ուտելիք է հայ գիւղացւոյն համար։

5, ՀԱՅՏԱՐ ՕՂԼԻ

Խաչլուայ քաւշանի դաշտային մասի արևելեան անկիւնը բռնած է Հայտար օղլի քաւշանը, որ Կալոյի կամ Ամատայ Ջրոյն աջ եզրին վերայ կէս դաշտային և կէս լեռնային գիւղ է, ունի 30 տուն ք. բնակիչ Բաշմցի ցեղին յատուկ։

Այս գիւղը թ. դալէէ 2 $^1/_2$ ժամ ուղիղ յարեւելս, Խաչլուայ արևելեան հարաւ 1 $^1/_2$ ժամ, Ամատ գնալիք ճանապարհին աջ կողմն, նաև Իրիցու ձորի աջ կողմն դաշտային վայր մի է. ժողովուրդն երկրագործ է, որպէս հայեր՝ կը սերմանեն ցորեան, դարի և կտաւատ նաև կորեկ, որ մէկին հարիւր կտայ։

Բօստանը լաւ կածի, մանաւանդ ձմերուկ, վարունգ, սոխ, շողգամ, կաղամբ և սիսեռ։

6, ԹՈՒՐՔՄԵՆԵՐ

Գիւղիս հայեր թուրքմեններ՝ իսկ քուրդք և թուրքք Ահմէտ բէկ կասեն, Հայտար օղլի յարևելս $^1/_2$ ժամ. Ամատայ ճանապարհի ձախ կողմն, ուղղակի Կալոյի Ջրի աջ ափին վերայ 18 տնուոր Բաշմցի ցեղին յատուկ քրդեր են և 4—5 տուն ևս գաղթական թերեքեմէ թուրքեր։

Թուրքմեններ Բօղ-Թեփէ լերան ի հարաւ խոնարհած թեւի դաշտի մէջ սպառուած վայրն կազմած բարձր դարի և Կալոյի Ջրի միջավայրն սեղմուած է և գեղեցիկ տեսարանէ զրկուած։